# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2023/Հ-20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 13 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | կիսավերարկու | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Մուգ փիրուզագույն անջրանցիկ կտորից 100% նեյլոն, ջրայուղաանդրադարձնող ծածկույթով, կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթ: Քաշը 1մ2 170 գ: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծալվող օձիքից: Կիսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և տաք ներդիրով է: Կիսավերարկուին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մմ տրամագծով պլաստմասե կոճակներ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Կիսավերարկուի գոտու կողային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առանձգական ժապավեն: Կոճկվում է կափույրով ծածկվող սև գույնի շղթայով և կպչունակով: Թիկունքը` վերին կտրվածքով, կարմիր եզրաքուղով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կարմիր եզրագծով կափույրի տակ ներկարվում են շղթայով փակվող գրպաններ: Թեզանիքը առանձգական ժապավենով, ձախ կողմում ծոցագրպան: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է <<ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> կամ (ՆԳՆ) մակագրությամբ կտոր, թիկունքին <<POLICE>> մակագրությամբ կտոր: Աստառը` մուգ փիրուզագույն, քաշը 70 գր մ2: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, որը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | պատրաստվում է գունավոր գործվածքից: Ուսադիրները` սև կտորից, կիսավերարկուի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 3 հատ` պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱԾԱՊՁԲ-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2023/Հ-20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 13 | | | | | |